Աստուծոյ: *44* Այլ դու, Արշակ, փոխանակ զի զգործս Կայէնի գործեցեր, զանէծսն Կայէնի զգեցջիր. անկջիր կենդանւոյն ի թագաւորութենէդ քումմէ, եւ չարչարեսցիս առաւել քան զՏիրան զիայրն քո, եւ դառն մահուամբ զկեանս քո յերկրէս մեծ նեղութեամբ վճարեսջիր:

45 Եւ զայս ամենայն խաւսեցեալ ընդ թագաւորին քահանայապետին մեծին Ներսէսի, գնաց ի թագաւորէն, եւ այլ ոչ դարձաւ անդրէն յայն բանակ: *46* Իսկ զպատանեակն Գնել առնուին գնային մաւտ ի Սիւսն[1] արքունի, եւ անդէն կառափէին ի սարակ լերինն, որում տեղւոյն Լսին անուանեալ է, մաւտ յորմածս արգելոցացն որսոյն էրիոցն, ընդդէմ մուրտաստանին աղբերացն բազմոցացն արքունի, յանդիման բանակետեղ ընին:

47 Ապա հրաման եղեւ յարքայէն. Ամենայն մարդիկն որ իցեն ի բանակին, մեծ եւ փոքր առ հասարակ, մի՛ ոք իշխեսցէ չերթալ. այլ ամենայն ոք առ հասարակ երթիցեն դիցեն աշխար կոծոց, եւ լացցեն զԳնել մեծ սեպուհն Արշակունի զսպանեալն: *48* Իսկ ինքն թագաւորն գնացեալ ի լալիսն, նստեալ լայր զեղբաւրորդին իւր, զոր ինքն եսպան: *49* Երթեալ նստէր մաւտ առ դին, լայր ինքն, եւ տայր հրաման՝ կոծ մեծ եւ աշխար դնել շուրջ զսպանելով դիակամբն: *50* Իսկ կինն սպանելոյն Փառանձեմն զհանդերձսն պատառեալ, զգէսս արձակեալ, մերկատիտ[2] ի մէջ աշխարանին կոծէր. ձայն արկանելով ճչէր, յողբս արտասուաց յաղիողորմ գուժի առ հասարակ զամենեսեան լացուցանէր: *51* Իսկ թագաւորն Արշակ ի լալիսն տեսանէր զկինն սպանելոյն, տռփէր եւ ակն դնէր՝ առնուլ զնա իւր կնութեան:

52 Իսկ այն որ զնենգութիւն քսութեանց նիւթեաց, եւ դաւով ի վերայ իւրոյ հարազատին սպանութիւնս կատարեաց, վասն նորին կնոջն արար զայն, զի մեծապէս սիրով հարեալ էր ի նմա, զՏիրիթն ասեմ, որ յառաջագոյն հարեալ ի կնոջն յայնմիկ, վասն որոյ զնենգութիւնս սպանութեանցն թագաւորաւն գործեաց: *53* Իսկ մինչ դեռ ի նմին կոծն սաստկացեալ էր, Տիրիթն սկսանէր ժոյժ չունելոյ տրփանացն: *54* Պատգամ յղէր առ կին մեռելոյն, ասէ՝ զի Մի՛ կարի զանձն քո աշխատ առներ այդչափ, զի այր բարի ես եմ քան զնա. ես սիրեցի զքեզ, վասն այսորիկ մատնեցի զնա ի մահ, զի զքեզ առիցս ինձ կնութեան: *55* Արդ մինչ դեռ կոծ մոլութեան զդիակամբն ջայլէին, զայսպիսի պատգամս առաքէր Տիրիթն: *56* Բողոք բառնայր՝ թէ լուարուք ամենեքեան, զի մահ առն իմոյ վասն իմ եղեւ. զի որ ինձ ակն եդ վասն իմ, զայրն իմ ետ սպանանել: *57* Ձհերսն փետէր, ճչէր ընդ կոծելն:

58 Ապա իբրեւ մեծ իրքն համարձակ յայտնեցան ի լսելիս ամենեցուն, եւ ի ձայնարկունքն ամենայն եղեւ նա մայր ողբոցն, եւ ձայնարկունքն ամենայն

1 *Օրինակ մի՝* ի սիւնսն
2 *Օրինակ մի՝* մերկատիկ